ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-17/20» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյան համայնքի կարիքների համար ինքնաթափ աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

30/10/2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյանը (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյանը (ԳՊ/ԲԱ),
Կ. Վարդանյանը (ԳՊ/ԳԱ), Ա. Չոբանյանը (ԳՊ/ԳԱ)
Քարտուղար՝ Ս.Աղաջանյանը (ԳՊ/ՄՀմ)

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-17/20» ծածկագրով Աբովյան համայնքի կարիքների համար ինքնաթափ աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-17/20» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի բացման մասին
Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2017 թվականի հոկտեմբերի 30-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին
Մ. Գուլոյան

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք աղբատար ավտոմեքենայի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի			
Հ/հ	**Անվանումը**	**Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը**	**Հասցեն**
1	«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	alfa.trade01@mail.ru	Գ. Ջրվեժ 2-րդ. փող., տուն 28

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
Մ. Գուլոյան

ՀՀ դրամ

Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	4 850 000	-	4 850 000 (չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար)

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին
Մ. Գուլոյան

4.1 «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Գուլոյան

անդամներ՝ Կ.Վարդանյան

Ա. Չոբանյան

Լ. Շառաջյան

Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ Ս. Աղաջանյան